

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 19/06

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
վարչության նիստի

ք. Երևան

21 հոկտեմբերի 2019թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 9. Իգոր Մկրտումյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 10. Լիաննա Գալստյան |
| 3. Աննա Կարախանյան | 11. Կոլյա Հովհաննիսյան |
| 4. Արամ Վերդյան | 12. Միսակ Խաչատրյան |
| 5. Արման Խաչատրյան | 13. Սիրանուշ Վարդանյան |
| 6. Արման Ներսիսյան | 14. Քրիստինա Հակոբյան |
| 7. Արմեն Մուրադյան | 15. Քրիստինե Գյոնջյան |
| 8. Գրիգորի Սադյան | |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության մի շարք անդամներ՝ Անդրանիկ Մինասյանը, Աշոտ Հարությունյանը, Ավետիք Կարեյանը, Գագիկ Գրիգորյանը և Վահան Հովսեփյանը:

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Լիաննա Գալստյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է: Այնուհետ, նիստի նախագահողի առաջարկությամբ հաստատվեց օրակարգը:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծին հավանություն տալու մասին:
2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծին հավանություն տալու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Իգոր Մկրտումյանը՝ նշելով, որ վարչության նախորդ նիստերի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագիծը ներկայացվել էր կազմակերպության անդամներին՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու նպատակով: Նիստի նախագահողը տեղեկացրեց, որ ստացված դիտողությունները, առաջարկություններն ամփոփվել են և այժմ ներկայացվում են վարչության նիստի քննարկմանը:

Կազմակերպության անդամների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ ծավալվեց քննարկում (որի ընթացքում քվեարկության դրվեց ստացված յուրաքանչյուր դիտողություն և առաջարկություն, բացառությամբ այն

դիտողությունների և առաջարկությունների, որոնք տեղում հանվեցին դիտողության կամ առաջարկության հեղինակ հանդիսացող կազմակերպության անդամների կողմից):

Օրակարգի 1-ին հարցի քննարկման արդյունքում կազմակերպության վարչությունը ծայների 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ (Ալբերտ Տոնեյանը և Կոլյա Հովհաննիսյանը չմասնակցեցին քվեարկությանը) որոշեց հավանություն տալ կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծին՝ ներառելով նախագծի 18-րդ կետի 5-րդ ենթակետի վերաբերյալ առաջարկությունը՝ (վարչության խմբագրությամբ), 20-րդ կետի 6-րդ ենթակետի վերաբերյալ առաջարկությունը՝ (վարչության խմբագրությամբ), 25-րդ կետի վերաբերյալ առաջարկությունը (դրանից բխող՝ 44-րդ կետի 8-րդ ենթակետի, 47-րդ կետի 10-րդ ենթակետի փոփոխություններով), 33-րդ կետի վերաբերյալ առաջարկությունը (դրանից բխող՝ 44-րդ կետի 8-րդ ենթակետի, 47-րդ կետի 10-րդ ենթակետի փոփոխություններով), 44-րդ կետի 9-րդ ենթակետի վերաբերյալ առաջարկությունը (վարչության խմբագրությամբ):


Որոշում: *Հավանություն տալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծին:*

2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:

Հարցի վերաբերյալ ծավալված քննարկման արդյունքում ծայների 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ (Ալբերտ Տոնեյանը և Կոլյա Հովհաննիսյանը չմասնակցեցին քվեարկությանը) որոշվեց 2020 թվականի փետրվարի 6-ին համատեղ հավաքի ձևով գումարել կազմակերպության ժողով՝ հետևյալ օրակարգի նախագծով՝ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:


Որոշում: *2020 թվականի փետրվարի 6-ին համատեղ հավաքի ձևով գումարել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով՝ հետևյալ օրակարգի նախագծով՝ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:*

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Լիաննա Գալստյան